

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиан» (образование) еженедельник 10.02.2021թ. չորեքշաբթի թիվ 6-7 (979-980)

## Տյառնընդառաջ (Տրևեգ)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի՝ *փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան* եւ *Աստվածախախտության* օրվանից 40 օր հետո, մեծ հանդիսավորությամբ նշում է քառասուն օրական մանուկ **Հիսուսին** տաճարին ընծայաբերելու տոնը՝ **Տյառնընդառաջը**: Տյառնընդառաջ՝ նշանակում է *Տիրոջն ընդառաջ գնալ*:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի** տնօրինությամբ՝ *Տյառնընդառաջը* հռչակվել է **նորասպակների օրհնության օր**:

*Տյառնընդառաջի* տոնակատարությունները սկսվում են *փետրվարի 13-ին*: Երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է **Անդաստանի** (արտերի եւ այգիների) **օրհնություն**, որը խորհրդանշում է ձմռան ավարտի մոտենալը եւ *գարնանամուտը*: Ժամերգության ավարտին կատարվում է *մոմի օրհնություն*: Հավատացյալները օրհնված մոմերից վառում են իրենց մոմերը՝ **Քրիստոսի** փրկարար լույսի խորհրդանշիչը իրենց հետ տանելով տուն:

Ժողովրդական սովորույթի համաձայն՝ օրհնված մոմի կրակով են վառում նաեւ *Տյառնընդառաջի* խարույկը: Ըստ **Սուրբ Գրիգոր Տաթևացու**՝ խարույկի կրակը բորբոքելիս հայցում ենք Աստվածային սիրո հուրը: Ինչպես **Տիրոջը** տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջահերով եւ կանթեղներով ելավ **Նրան** ընդառաջ, մենք էլ նույն օրհնակով կրակ ու ջահ ենք վառում եւ **Տիրոջ** գալստյան նախատոնակը կատարում: Հեթանոսներն **Աստծո** պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը, որպես **Քրիստոսի** ծառա, բերում ենք **Նրան** ծառայեցնելու:

*Տյառնընդառաջի* տոնը **Տիրոջն** ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: **Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին**, երկնքից խոնարհվեց եւ մեր *փրկության* համար աշխարհ եկավ: Սա Աստվածային սիրո գերագույն դրսեւորումն է **Արարչից** հեռացած արարածի հանդեպ: *Մարդացած Աստվածորդին* ամեն պահ դիմում է մեզ. **«Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, եւ ես ձեզ խաղաղություն կպարգեւեմ»** (Մատթ. ԺԱ 28): Հաջորդ քայլը մերն է: Յուրաքանչյուրս պետք է անսանք **Տիրոջ** ձայնին, քանզի ով **Նրա** հետեւից է գնում, **«խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կյանքի լույսը»** (Հովհ. Ը 12):

Ըստ *Ավետարանի՝ Հովսեփն* ու *Մարիամը* Բեթղեհեմում 40 օր մնալուց հետո վերցնում են մանուկ **Հիսուսին** եւ գնում Երուսաղեմ՝ **Նրան Տիրոջը** ներկայացնելու (Ղուկ. Ա 22): Նրանց ընդառաջ է գալիս **Սիմոն** անունով **Աստծո** ծառան, ով **Տիրոջից** խնդրել էր իրեն այնքան կյանք տալ, մինչեւ տեսնի մարդկության **Փրկչին՝ Աստծո Որդուն**: Սրբազան ավանդության համաձայն, երբ տեղ են հասնում, **Աստծո** հրամանով փակված տաճարի արեւելյան դուռը բացվում է:

*Տյառնընդառաջի* տոնական *Սուրբ Պատարագից* հետո բոլոր եկեղեցիներում կատարվում է *նորասպակների օրհնության կարգ*:

Սովորության համաձայն՝ *Տյառնընդառաջի* տոնին նվերներով այցելում են նորասպակներին:



## Համագային

### Սրբոց Վարդանակց

Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես, անկախ նրանից՝ **սուր** է ձեռքինդ, **խաչ**, **բահ** թե **գրիչ**: Ու հայոց պատմությունն էլ եղել է ընդհանրական **Ավարայր**. գոյապայքար թե՛ իրական, թե՛ հոգեւոր պատերազմների մեջ՝ հանուն ինքնության, տեսակի պահպանման, հանուն համընդհանուր քաղաքակրթական զարգացման:

**Ավարայրը** մեր հիշողության մեջ մնացած **առաջին հայրենական պատերազմն է**, նաեւ՝ աշխարհում հանուն հավատի մղված **առաջին** խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց որպես հանուն հայրենիքի անձնագոհության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ. **«Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»**, - **Վարդանակց** պատմիչ **Եղիշեի** բանաձեւ-ձեւակերպումը եղավ մեր ամենից նվիրական ասույթ-կարգախոսը:

Հարունակությունը՝ էջ 11

## Երկիր

### Հաստատվել է հանրակրթության պետական չափորոշիչը

ՀՀ կառավարության փետրվարի 4-ի նիստում հաստատվել է Հանրակրթության պետական չափորոշիչը, որի հիմքի վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հաջորդաբար կհաստատի առարկայական ծրագրերն ու չափորոշիչները: Մինչ Կառավարության հաստատմանը ներկայացվելը Հանրակրթության պետական չափորոշիչի նախագիծն անցել է հանրային և մասնագիտական քննարկումների տևական փուլ, ներկայացված բազմաթիվ առաջարկների հիման վրա նախագիծը շտկվել, խմբագրվել ու լրամշակվել է:

Հանրակրթության պետական չափորոշիչի նախագիծը ՀՀ կառավարության նիստում նախարար **Վահրամ Դումանյանի** առաջարկով ներկայացրել է նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**:

Հարունակությունը՝ էջ 2

## Եղանակի հետ

### Զմեռ

Տարվա բոլոր եղանակներն էլ գեղեցիկ են... Չե՞ք հավատում, պոետների՞ն հարցոք **(տես՝ էջ 12-13)** Թեեւ ցուրտ է, ձյուն ու սառույց, բայց ձմեռն էլ իր հրմայքներն ունի: Եվ ոչ միայն մանուկների համար: Չմեռը նաեւ գարնան ավետաբերն է, ու թե առատ է ձյունը, առատ է լինելու նաեւ տարվա հունձըը: Տա՛ Աստված:

Իսկ մինչ այդ... Չմեռը նաեւ *փորձություն* է... Փորձություն՝ **Երկրի, Ազգի ու Մարդու...** Չմեռը լինում է նաեւ *քաղաքական...* Տա Աստված՝ այն չլինի տեսական ու չուշանա **Գարունը**:

# Հաստատվել է հանրակրթության պետական չափորոշիչը

սկիզբը՝ էջ 1

## Կտրուկ փոփոխություն՝ ավելի ճկուն համակարգ

Նախարարի տեղակալը, ներկայացնելով նախագիծը, նշել է, որ հանրակրթության պետական նոր չափորոշիչը սահմանում է պետության ակնկալիքը եւ պահանջը դպրոցից՝ հանրակրթական բոլոր աստիճանների սովորողներից եւ շրջանավարտներից: Ըստ այդմ՝ կատարված ամենակարեւոր փոփոխությունը հայեցակարգային է, քանի որ նոր չափորոշիչը հիմնվում է սովորողի հմտությունների կարողունակությունների վրա: Հավասարապես շեշտադրվում են սովորողի գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը եւ արժեքային համակարգը:

Սահմանվում են որակական այն պահանջները, որ շրջանավարտը պետք է ունենա դպրոցն ավարտելիս, նկարագրված են ակնկալվող վերջնարդյունքներն ըստ կրթական աստիճանների (տարրական, հիմնական եւ ավագ), կոմպետենցիաներն ու կարողունակությունները:

«Խուսափելով այս պահին գործող առարկայակենտրոն մոտեցումներից, երբ մենք ունենք ինքնարժեք առանձին առարկաներ, նախատեսվում է անցում կատարել ինտեգրված մոտեցմանը, որը հնարավորություն է տալիս տեսնել փոխկապակցված թեմաներ, առանձնացնել խաչվող թեմաները, եւ յուրաքանչյուր առանձին առարկայի միջոցով որոշակիորեն նպաստել ընդհանուր վերջնարդյունքի ձեւավորմանը: Սա նաեւ թույլ կտա էական խուսափել կրկնություններից՝ առավել արդյունավետ օգտագործելով այն ժամանակը, որը երեխան ծախսում է դպրոցում: Առաջարկվող փոփոխությանը ընդհանուր առմամբ դպրոցականների ծանրաբեռնվածությունը նվազեցվում է՝ չկրճատելով բովանդակային ծավալը եւ նպատակային դիտարկելով ավելի բարձր կրթական արդյունքը»,- նշել է ժամանա Անդրեասյանը:

Նոր մոտեցումը, նախարարի տեղակալի հավաստմամբ, ավելի ճկուն աշխատելու հնարավորություն է տալիս: Օրինակելի ուսումնական պլանի հիման վրա սահմանվելով հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը՝ միաժամանակ դպրոցները հնարավորություն կունենան դպրոցական եւ անհատական բաղադրիչի շրջանակում լինել ավելի ստեղծարար եւ սահմանել սեփական ուսումնական պլանը՝ հաշվի առնելով նաեւ սովորողի անհատական նախասիրությունները:

## Ուսումնական բնագավառի հինգ էլեմենտներ

Ինչպես Հանրակրթության մասին ՀՀ օրենքով, այնպես էլ գործող Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված չէ «ուսումնական բնագավառ» հասկացությունը: Ըստ Հանրակրթության պետական չափորոշիչի նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ այս սահմանման բացակայություն պարագայում հասկանալի չէ, թե ինչ սկզբունքով են առանձնացված ներկայիս ուսումնական բնագավառները եւ ինչպես են դրանք իրար առնչվում:

Առաջարկվում է Հանրակրթության պետական չափորոշիչում հստակ սահմանել «ուսումնական բնագավառ» հասկացությունը, դրա հիմքում դնելով ոչ թե գոյություն ունեցող առարկաների խմբավորումը, այլ «հանրակրթության բովան-

դակություն» հասկացությունը: Ըստ այդմ՝ «ուսումնական բնագավառը կրթության բովանդակության որոշակի տիրույթ է, որն առանձնանում է ուսումնասիրության օբյեկտով եւ ճանաչողության յուրահատուկ մեթոդներով»:

Նման բաշխումը հնարավորություն կտա առարկաների ծրագրերը մշակելիս խուսափել անհարկ կրկնություններից, տարբեր դասագրքերում նույն երեւույթի վերաբերյալ երբեմն հանդիպող տարբեր բացատրություններից, նույն մեծությունների տարբեր նշանակումներից, ինչը ծանրաբեռնում էր դասագիրքը եւ աշակերտի մոտ հակասություններ էր առաջացնում:

Յուրաքանչյուր ուսումնական բնագավառ դպրոցի տարբեր աստիճաններում ներկայացվում է որոշակի առարկայացանկով, որի ընտրության համար հիմք են հանդիսանում չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներն ու սովորողների ընկալման տարիքային առանձնահատկությունները:

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով ուսումնական բնագավառի առաջարկվող սահմանումը, անհրաժեշտ կլինի անդրադառնալ գործող չափորոշիչով նկարագրված ուսումնական բնագավառներին եւ վերաձեւակերպել դրանք: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել հետևյալ 7 բնագավառները. «Հայոց լեզու եւ գրականություն», «Հայրենագիտություն», «Օտար լեզուներ», «Բնագիտություն, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, Մաթեմատիկա (ԲՏԾՄ)», «Հասարակություն, հասարակական գիտություններ», «Արվեստ եւ արհեստ», «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն»:

## Պարտադիր առարկաներ եւ նոր նախագծային ուսուցում

Համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի նախագծի՝ բացի վերը նշված 7 ուսումնական բնագավառներից պարտադիր ուսուցման համար սահմանում է հիմնական հետևյալ առարկաները. «Հայոց լեզու եւ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Օտար լեզու»: Նշված առարկաներն ունեն երաշխավորված ժամաքանակ բոլոր դպրոցներում՝ անկախ դպրոցի կազմակերպարարական ձեւից:

Առաջարկվում է հենքային ուսումնական պլանում կատարել փոփոխություններ, որոնք կարտացոլեն առաջարկվող նոր բնագավառներին հատկացված ժամաքանակները: Միեւնույն ժամանակ, առաջարկվում է բնագավառներին հատկացված ժամաքանակները ներկայացնել տոկոսային հարաբերակցությամբ: Սա հանրակրթական ուսումնական հաստատություններին թույլ է տալու ձեւավորել սեփական մոտեցումը՝ յուրաքանչյուր բնագավառին հատկացվող համամասնության եւ ժամաքանակների միջոցով մեծացնելով նրանց ինքնավարությունը

## Ուսումնական բնագավառներին հատկացվող ծավալները

Ուսումնական բնագավառներին հատկացված տարեկան նորմատիվային ժամաքանակները պետք է համապատասխանեն կրթական աստիճանին հատկացված ամբողջ ժամաքանակին: Բնագավառներին հատկացվող ժամաքանակները տոկոսային հարաբերությամբ արտահայտված են աղյուսակում.

Ուսումնական բնագավառ	Տարրական 3590	Միջին 5950	Ավագ 4080
1) Հայոց լեզու եւ գրականություն	24-28%	13-16%	9-20%
2) Հայրենագիտություն	5%	10%	8%
3) Օտար լեզուներ	10-15%	12,5-15%	5-13%
4) ԲՏԾՄ	20-28,5%	33-36%	12,5-38%
5) Արվեստ եւ արհեստ	10-16%	8-9%	3-5%
6) Հասարակություն, հասարակական գիտություններ	2%	5-6%	6-12%
7) Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն	7-9%	7-8%	7-10%
Ընտրովի բաղադրիչ	10%	4%	6%

## Ուսումնական պլան՝ երեք բաղադրիչով

Առաջարկվում է ուսումնական պլանում ներառել երեք բաղադրիչ՝ պետական բաղադրիչ, դպրոցական բաղադրիչ եւ անհատական բաղադրիչ: Անհատական բաղադրիչը նորամուծություն է, որը գործող չափորոշիչում չի եղել: Անհատական բաղադրիչը ավելացնելու անհրաժեշտությունը բխում է աշակերտների հետաքրքրություններին եւ կարիքներին արձագանքելու անհրաժեշտությունից: Անհատական բաղադրիչը աշակերտին հնարավորություն է տալիս ընտրել դպրոցի կողմից առաջարկվող այն նախագծերը կամ խմբակները, որոնց ցանկանում է մասնակցել: Այս համատեքստում կարելու է արձանագրել, որ անհատական բաղադրիչի ֆինանսավորումը ներառված է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման բանձեւում, ինչը նշանակում է, որ երաշխավորված է լինելու խմբակների եւ հետազոտական աշխատանքների ֆինանսավորումն ու իրականացումը՝ նպաստելով սովորելու արդյունավետ միջավայրի ձեւավորմանը:

## Անհատական ուսուցում՝ Ավագ դպրոցի բարեփոխում

Անհատական բաղադրիչը հատկապես կարելու է հանրակրթական ուսումնական հաստատության երրորդ աստիճանում՝ ավագ դասարաններում, որտեղ անհատական բաղադրիչի կշիռը կազմելու է 15 տոկոս: Նոր մոտեցումը աշակերտի կարիքներից բխող ուսումնական ծրագիր ձեւավորելու եւ դրա հիմքով ավագ դպրոցի բարեփոխման հնարավորություն է տալիս:

«Այսպիսով կկարողանանք հրաժարվել այս պահին գործող հոսքային ուսուցումից եւ անցնել անհատականացված դասացուցակի՝ ըստ յուրաքանչյուր աշակերտի նախասիրության եւ մասնագիտական կողմնորոշման: Սա նաեւ թույլ կտա շտկել քաղաքային եւ գյուղական բնակավայրերի միջեւ այս պահին առկա անհավասարությունը, քանի որ գյուղական բնակավայրերում գործում են միջնակարգ դպրոցներ, եւ ի տարբերություն քաղաքների՝ չկան առանձնացված ավագ դպրոցներ: Ավագ դպրոցի բարեփոխմանը կնպաստի նաեւ մոդուլային ուսուցումը, որը սովորողին հնարավորություն կտա հանրակրթության ավագ աստիճանում կարճաժամկետ դասընթացների միջոցով ձեռք բերել մասնագիտական կողմնորոշում», - նշել է ժամանա Անդրեասյանը:

Մյուս կարեւոր նորությունը 7-րդ դասարանից սկսած նախագծային ուսուցման ներդրումն է, որի նպատակն է զարգացնել աշակերտի ինքնուրույն, հետազոտական եւ ստեղծագործական կարողությունները, ինչը նաեւ համայնքային նախագծերում ներգրավվելու հնարավորություն կընձեռի:

## Կրտսեր դպրոցում միավորային գնահատական չի լինի

Գնահատման համակարգում եւս կատարվում է կտրուկ փոփոխություն. առաջարկվում է կրտսեր դպրոցում հրաժարվել միավորային գնահատումից՝ կիրառելով խրախուսական բնութագրումներ, իսկ միավորային գնահատումը կգործի 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից: Առաջարկվում է նաեւ հրաժարվել «անբավարար» գնահատականից, ինչը նշանակում է, որ այլեւս չի գործի հաջորդ դասարան չփոխադրվելու, նույն դասարանում մնալու եւ կրթական ծրագիրը կրկնելու ինստիտուտը:

## Չափորոշիչ վերջնական ներդրումը՝ 2023 թվականից

Ժամանա Անդրեասյանը տեղեկացրել է, որ առաջիկա մեկ ամսում կսահմանվի Հանրակրթության պետական չափորոշիչի ներդրման ճանապարհային քարտեզ: Մինչ համընդհանուր կիրառումը չափորոշիչը պետք է անցնի փորձարկում, որը կսկսվի 2021 թվականի սեպտեմբերից: Նախատեսվում է իրականացնել լայնածավալ վերապատրաստումներ, ուսումնական նյութերի մշակումներ: Փորձարկման արդյունքները հաշվի առնելով՝ չափորոշիչը կիրանշակվի եւ 2023 թվականից կներդրվի բոլոր դպրոցներում:

## Կրթության ամբողջական բարեփոխում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել հանրակրթության չափորոշիչի նախագծի մշակման համար՝ ընդգծելով, որ աշխատանքները կատարվել են բավականին բարդ պայմաններում:

«Կրթության չափորոշիչի ընդունումը Կառավարության կարեւորագույն ռեֆորմներից մեկն է. շատ կարեւոր է, որ ունեցել ենք կամք՝ փոփոխությունները հասցնելու այս կետին: Կարեւոր են համարում ռեֆորմի հետագա շարունակությունը: Պարզ է, որ լինելու են քննադատություններ, ընդհուպ մինչեւ ինչպես կարելի է գնահատման համակարգից հրաժարվել, բայց սա համապարփակ ծրագիր է եւ պետք է իրականացնել՝ ավելի մեծ շեշտ դնելով աշակերտի կարիքների, նախասիրությունների վրա: Պետք է ուշադիր լինել, թե երեխան ինչի վրա է ծախսում ժամանակը, ինչ գիտելիք եւ հմտություն ենք զարգացնում դպրոցում, քանի որ դրանից է կախված՝ 15-20 տարի հետո տեխնոլոգիական ապրանք կունենանք, թե ոչ»,- նշել է նա:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալը հավելել է, որ այժմ Աժ օրակարգում է գտնվում նաեւ «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նախագիծը, որն ամբողջացնում է կրթական բարեփոխումների շղթան:

## ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի նիստում

## Սերունդ

# Քննարկվել է ուսուցիչների կամավոր ատեստավորման ծրագրի նախագիծը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի այս տարվա առաջին նիստը վարել է խորհրդի նախագահ, նախարար Վահրամ Դումանյանը: Նախարարը ծանոթացել է խորհրդի անդամների հետ՝ ներկայացնելով ոլորտի վերաբերյալ իր մտտեցումները, զարգացման միտումները և տեսլականը:

«Ամեն ինչի հիմքում ընկած է կրթությունը, որը մեր անվտանգության հիմքն է: Կրթությունը և մշակույթը փոխկապակցված են. կրթությունը կտուժի, եթե դրանք չկա մշակույթի բաղադրիչ և հակառակը: ԿԳՄՍ նախարարության ոլորտները բազմաշերտ են, հետեւաբար մեր գործունեությունն առնչվում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու: Այդ պատճառով հանրությունը վերահսկում մեր յուրաքանչյուր քայլ և բարեփոխում, ինչը, իհարկե, շատ պարտավորեցնող է: Մենք շահագրգիռ ենք լսել ցանկացած քաղաքացու արդարացի և առողջ գնահատական, որը մտահոգված է ոլորտի և պետության զարգացմամբ: Այդ առումով հասարակական խորհուրդը լավագույն հարթակն է, քանի որ այստեղ ներկայացված են ԿԳՄՍ բոլոր ոլորտների ներկայացուցիչները», - նշել է Վահրամ Դումանյանը՝ ընդգծելով, որ հասարակական խորհուրդը պետք է իրական դերակատարություն ունենա, այն է՝ քննարկումների միջոցով հանդես գա քննադատությամբ, եթե դրա անհրաժեշտությունը կա, և առաջարկներով, որպեսզի համապատասխան բարեփոխումներ իրականացվեն:

Նիստի օրակարգում ներառված էր «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագրի» նախագծի ներկայացումը, որը հասարակական խորհրդի անդամներին ներկայացրել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժամնա Անդրեասյանը: Նա կարեւորել է ուսուցիչների դերը և նրանց ուղղված քաղաքականությունը: «Ցանկացած փոփոխություն, մասնավորապես՝ հանրակրթության ոլորտում, ի սկզբանե դատապարտված է անհաջողության, եթե հաշվի չի առնվում դրա կարեւոր բաղադրիչը՝ մարդկային ռեսուրսը, այս դեպքում՝ ուսուցիչը», - նշել է փոխնախարարը՝ ներկայացնելով ուսուցիչներին ուղղված նոր քաղաքականությունը: Ըստ բանախոսի՝ առկա հիմնական խնդիրներն են՝ ուսուցիչների աշխատանքային պայմաններն ու խրախուսման գործիքները, ուսուցչի մասնագիտության հեղինակությունն ու նոր մասնագետների մուտքը համակարգ, ուսուցչական կադրերի որակն ու մասնագիտական շարունակական զարգացումը, ինչպես նաև մանկավարժական նորարարությունն ու ստեղծարարությունը:

«Ընդհանուր առմամբ՝ ուսուցիչների 40 տոկոսն ավելի քան քսանհինգ տարվա աշխատանքային ստաժ ունի: Սրա համեմատ՝ դպրոց նոր մուտք գործող ուսուցիչները կազմում են ընդամենը 2 տոկոս, ինչը նշանակում է, որ սերնդափոխությունը տեղի է ունենում դանդաղ: Կենսաթոշակային տարիքի ուսուցիչները կազմում են ուսուցիչների ընդհանուր թվի շուրջ 11.7 տոկոսը: 60-ն անց ուսուցիչների թիվը գերազանցում է համակարգ նոր մուտք գործող ուսուցիչների



թվին», - այսպիսի փաստական տվյալներ է ներկայացրել ժամնա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ այժմ հերթական ատեստավորման է ենթակա ուսուցչական համակազմի 56 տոկոսը: Նրա խոսքով՝ ուսուցիչների զարգացման մոտիվացիան խթանելու համար 2012 թվականին ներդրված որակավորման տարակարգերի քառասուիճան համակարգը գործում է կամավորության սկզբունքով: Ըստ փոխնախարարի՝ չորրորդ՝ բարձրագույն աստիճանի տարակարգ ստանալու և աշխատավարձի 50 տոկոսի չափով հավելավճար ստանալու համար ուսուցչից պահանջվում է առնվազն 9 տարի: 2020 թվականի դրությամբ Հայաստանի շուրջ 37500 ուսուցիչներից միայն 2226-ն ունի առաջին, 122-ը՝ երկրորդ և 1 ուսուցիչ՝ երրորդ աստիճանի տարակարգ, որը կազմում է ուսուցիչների ընդհանուր թվի 6,2 տոկոսը:

Որպես առաջարկվող լուծումներ՝ ժամնա Անդրեասյանն առանձնացրել է արդեն ներդրված մի շարք գործիքներ, այն է՝ ուսուցիչների գործունեությանն աջակցող մեթոդական օգնությունները և ֆինանսավորման նոր կարգերը, «Տարվա լավագույններ» դրամաշնորհային ծրագրերի մրցույթը, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի գործունեության մեկնարկը և այլն: Անդրադառնալով նոր գործիքի՝ սեփական նախաձեռնությամբ ատեստավորում ներդրման ծրագրին, բանախոսը նշել է, որ այն լինելու է ուսուցիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների ստուգում թեստավորման եղանակով՝ որպես արդյունք ունենալով ուսուցիչների խրախուսումը: Կամավոր ատեստավորման արդյունքում նախատեսվում է, որ 90 տոկոս և ավելի արդյունավետություն ցուցաբերած ուսուցիչները կհամարվեն ատեստավորումն անցած և կստանան հավելավճար՝ 50 տոկոսի չափով, 80 տոկոս և ավել արդյունավետություն ցուցաբերած ուսուցիչները և կհամարվեն ատեստավորումն անցած ու կստանան հավելավճար՝ 30 տոկոսի չափով: Երկուսի պարագայում էլ ուսուցչի միջին աշխատավարձը կմոտենա երկրի միջին աշխատավարձին: 60-79 տոկոս արդյունք ապահոված ուսուցիչները կհամարվեն ատեստավորումն անցած, աշխատավարձը կպահպանվի, իսկ 0-59 տոկոս արդյունքի դեպքում ուսուցիչը ենթակա կլինի պարտադիր վերատեստավորման՝ մեկ տարի անց:

Ըստ փոխնախարարի՝ առաջին տարում ատեստավորումը նախատեսվում է անցկացնել 7-12-րդ դասարաններում՝ «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ

գրականություն», «Հայոց պատմություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները դասավանդող ուսուցիչների համար: Երկրորդ տարում այն կանցկացվի 5-12-րդ դասարաններում բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչների համար, և պարտադիր կդառնա համակարգ նոր մուտք գործող այն ուսուցիչների համար, որոնք դասավանդելու են 7-12-րդ դասարաններում: Երրորդ տարում ատեստավորումը կանցկացվի 1-4-րդ դասարաններում (5-12-րդ դասարաններում) դասավանդող բոլոր ուսուցիչների համար, ինչպես նաև պարտադիր՝ 1-12-րդ դասարաններում դասավանդող ցանկացող՝ համակարգ նոր մուտք գործող ուսուցիչների համար:

Ժամնա Անդրեասյանի խոսքով՝ փոփոխություններ են նախատեսվում նաև հերթական ատեստավորման գործընթացում, այն է՝ գործընթացի թվայնացում, վերապատրաստման իրականացում և երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների միջոցով, ուսուցչի կողմից կրեդիտների ինքնուրույն հավաքագրումն հնարավորություն, վերապատրաստման համակցված եղանակի հնարավորություն՝ առկա է հեռավար միջոցների համադրմամբ, վերապատրաստման ծրագիր և չափորոշիչ:

Փոխնախարարի զեկույցից հետո հասարակական խորհրդի անդամները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով իրենց առաջարկություններն ու դիտողությունները: Նրանք նաև մի շարք հարցեր են ուղղել բանախոսին, որոնք հիմնականում վերաբերել են բազմաձևական դասարանների ձևավորման կարգի, նախկին վերապատրաստումների արդյունավետության, միասնական կամ այլընտրանքային մոդուլների օգտագործման, վերապատրաստման գործընթացում մասնավոր կազմակերպությունների հնարավոր ներառման, կամավոր և հերթական ատեստավորումների համեմատության, դրանց ժամանակացույցի, թեմաների ընտրության, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսուցիչների ատեստավորման, ինչպես նաև գիտնական ուսուցիչների, մանկավարժների ինքնակրթության և էթիկայի կանոնների և այլ խնդիրների:

Նիստի ավարտին հասարակական խորհուրդն ընդունել է որոշում՝ «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագրի» նախագծին հավանություն տալու մասին:

## Ռազմամարզական ճամբար՝ 11-րդ դասարանցիների ընդգրկմամբ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների ռազմամարզական ճամբարի կարգը»: Այն սահմանում է ռազմամարզական ճամբարի կառուցվածքը, օրվա կարգացուցակը, նյութատեխնիկական միջոցները, ծրագիրը, պատասխանատուները և նրանց գործառույթները, ինչպես նաև կարգավորում է ճամբարի կազմակերպման և անցկացման ընթացքն ու այլ իրավահարաբերությունները:

Ճամբարի կազմակերպումն ուղղված է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի յուրացմանը և ստացած գիտելիքների ամրապնդմանը գործնական ճանապարհով, իրավիճակային կողմնորոշման, նախաձեռնողականության և հմտությունների զարգացմանը, արտակարգ իրավիճակներում դիմակայելու, դրսևորվելու և արդյունավետ գործելու ունակությունների զարգացմանը, սովորողների ֆիզիկական և բարոյահոգեբանական հատկանիշների բարձրացմանը, ինչպես նաև դժվարին պայմաններում առաջադրանքների կատարման վճռականության ձևավորմանը:

Ճամբարին մասնակցում են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանում սովորող պատանիներն ու աղջիկները: Ճամբարի ծրագիրը համարվում է ՆՁՊ առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրի գործնական և կիրառական մասը: Ճամբարը հաշվարկվում է ՀՀ զինված ուժերի բանակի գնդի հաշվարկով: Տեւողությունը 12 օր է:

Ճամբարի ուսումնական գործընթացի ծրագիրը ներառում է հետևյալ թեմաները՝ ռազմարվեստի պատմություն, մարտավարություն, մարտավարաֆիզիկական պատրաստություն, կրակային, համազորային կանոնադրություններ, շարային պատրաստություն, ռազմական տեղագրություն /գործնական/, անվտանգ կենսագործունեություն, առաջին օգնություն, կապ և հեռահաղորդակցություն, հոգեբանական պատրաստություն և գոյատևման հիմունքներ:

Ճամբարի ֆինանսավորումն իրականացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Քաղաքացիները և շահառու խմբերը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի իրապարակման միասնական կայքում՝ մինչև փետրվարի 25-ը:



Մայր Աթոռ

Պատմություն կերտողները

... Որ արձանագրեն կորստի հաջողություններ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք...



Հանդիպմանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրէն...

Այնուհետեւ հայորդիներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը...

Այս առիթով Սորին Սրբությունը իր գնահատանքը բերեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակին...

Վեհափառ Հայրապետը նաեւ պատասխանեց երիտասարդների տարբեր հարցերին: Անդրադարձ կատարելով...

Խոսվեց նաեւ ազգային կյանքը հուզող զանազան խնդիրների, ինչպէս նաեւ եկեղեցու առաքելության...

Հանդիպմանը Կոմիտասի «Հորովել»-ի կատարումով երիտասարդները մխիթարություն պարգևեցին...

Վերջում Սորին Սրբությունը աղոթք բարձրացրեց Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի...


Կովելիս էլ սապոգները պիտի փայլեին

Գեւորգ Կոստանյանը ծնվել է 1996 թվականի հուլիսի 2-ին, Վայք քաղաքում:

«Սիրտն էլ ուզեիր՝ կտար: Մեծակ լավություն աներ: Շատ խղճով էր»,-ասում են ճանաչողները:

Սեպտեմբերի 27-ին՝ պատերազմն սկսելու օրվանից, գտնվել է Վայոց ձորի սահմանային դիրքերում:

«Վերջին անգամ հոկտեմբերի 9-ին եկավ մեր տուն՝ գնալուց առաջ: Նստեց, սուրճ դրեցի՝ խմեց: 2 ամիս առաջ ավտո էր առել, բայց դեռ չէր գրանցել իր անունով, սուրճ խմելու ընթացքում մեքենայի տիրոջ բոլոր տվյալները տվեց անունուս,



թե բա՝ կգանգես եղ տղային ու ավտոն կգրանցես քո անունով: Ամուսինս ասեց՝ այ ախպեր, կգաս, դու էլ քո ավտոն կգրանցես քո անունով: Ասեց՝ չէ՛, ախպերս, ես եմ՝ կարող ա հետ չգամ: Սուրճը խմեց, վերջացրեց, եկավ հաջող անելու ժամանակը:

Հաստատվել է հանրակրթության պետական չափորոշիչը

սկիզբը՝ էջ 2

Վարչապետը հարց է բարձրացրել «Հայ եկեղեցու պատմություն», «Հայոց պատմություն» եւ «Հայ գրականություն» առարկաների շուրջ բարձրագույն հանրային աղմուկի վերաբերյալ:

Օրախնդիր դարձած վերանայում

Նախագծի քննարկման ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժաննա Անդրեասյանը նշել է, որ երեխաները դպրոցում 12-ամյա կրթության ընթացքում մեր այժմյան հանրակրթական ծրագրերի շրջանակում ստանում են այն ծավալի գիտելիքներ եւ հմտություններ, որոնք, ըստ ուսումնասիրությունների, կարելի է ստանալ 9 տարվա ընթացքում:

թացքում: Որքան էլ ցավոտ լինի այս խնդրի գիտակցումը, մենք պետք է ընդունենք, որ 12 տարվա ժամանակն ու ծավալը պարտավոր ենք լցնել նոր գիտելիքներով ու հմտություններով»:

Հավելենք, որ հանրակրթության պետական նախորդ չափորոշիչը հաստատվել էր 2010 թվականին եւ փոփոխվել 2011 թվականին: Հանրակրթության ոլորտում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անցած շուրջ 10 տարիների ընթացքում կրթության բովանդակության, որակի եւ համապատասխանության առումով առաջ են եկել մի շարք լուրջ խնդիրներ, որոնք օրախնդիր են դարձնում պետական չափորոշիչի վերանայումը:

Առավելագույն եւ նվազագույն բեռնվածություն

Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը սահմանում է ծրագրերի նորմատիվային ծավալը (դասաժամեր), որտեղ նվազագույն եւ առավելագույն ծավալների տարբերությունը 800-1000 ժամ է:

Գործող չափորոշիչով տարրական դպրոցում, որպէս նվազագույն ծավալ, սահմանված է 2940 ժամ, որը առաջարկվող չափորոշիչում սահմանվել է ոչ պակաս, քան 2945 ժամ տարեկան:

որ իրենց անհմատ պահում են այնտեղ, ինքն ուզում է կռիվ գնա: Որ հասել են Արցախ, մեքենայից թռնելուց՝ ընկերներից մեկն ընկնում ու սկսում է վատ զգալ, Գեւորգն իջնում եւ օգնում է, իր տաք գլխարկը հագցնում է ընկերոջն ու ասում. «Ախպերս, բոլորս էլ հետ ենք գնալու, չվախենաս»:

չարունակությունը՝ էջ 10

կան դպրոցում, որպէս առավելագույն ծավալ, սահմանված է 3590 ժամ, որը առաջարկվող չափորոշիչում պահպանվել է նույնությամբ եւ սահմանվել է ոչ ավել, քան 3590 ժամ տարեկան:

Գործող չափորոշիչով միջին դպրոցում, որպէս նվազագույն ծավալ, սահմանված է 5100 ժամ, որը առաջարկվող չափորոշիչում պահպանվել է նույնությամբ եւ սահմանվել է ոչ ավել, քան 5385 ժամ տարեկան:

Գործող չափորոշիչով միջին դպրոցում, որպէս առավելագույն ծավալ, սահմանված է 5950 ժամ, որը առաջարկվող չափորոշիչում պահպանվել է նույնությամբ եւ սահմանվել է ոչ ավել, քան 5950 ժամ տարեկան:

Գործող չափորոշիչով ավագ դպրոցում, որպէս նվազագույն ծավալ, սահմանված է 3060 ժամ, որը առաջարկվող չափորոշիչում նվազեցվել է սահմանվել է ոչ պակաս, քան 2020 ժամ տարեկան:

Գործող չափորոշիչով ավագ դպրոցում, որպէս առավելագույն ծավալ, սահմանված է 4080 ժամ, որը առաջարկվող չափորոշիչում պահպանվել է նույնությամբ եւ սահմանվել է ոչ ավել, քան 4080 ժամ տարեկան:

Այսպիսով՝ գործող եւ առաջարկվող չափորոշիչներում սահմանված առավելագույն ծավալները նույնն են:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Երեւանի պետական համալսարան

Ռեկտորատի ընդլայնված նիստում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը մասնակցել է Երեւանի պետական համալսարանի ռեկտորատի ընդլայնված նիստին:

Նիստի ընթացքում նախարարը ներկայացրել է ՀՀ նախագահի հրամանագիրը՝ գիտության եւ կրթության բնագավառներում ներդրած ավանդի ու երկարամյա անձնվեր աշխատանքի համար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Թռչունյանին հետմահու «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով պարգևատրելու մասին: Մեղալը տրվել է Արմեն Թռչունյանի որդուն՝ Կարեն Թռչունյանին:

Մինչ պարգևի հանձնումը, Վ. Դումանյանն անդրադարձել է մշակույթի գիտնականի մեծ ավանդին, ինչն իր առանձնահատուկ տեղն ունի ինչպես ԵՊՀ-ում եւ Հայաստանի գիտության համակարգում, այնպես էլ միջազգային ասպարեզում:

«Համալսարանն առաջին հերթին ավանդույթների պատմությունն է, որն առաջին հերթին կերտում են մարդիկ՝ ուսանողները եւ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: ԵՊՀ 100-ամյա գիտակրթական եւ մշակութային կյանքում առանձնակի դերակատարում ունեցած մարդկանցից մեկն է Արմեն Թռչունյանը՝ հայաստանյան գիտության առաջամարտիկը, դասական իմաստով պրոֆեսորը: Մարդ, ում կենսագրության ամեն մի տողը գործունեության մի մեծ փուլ է բնորոշում: Մարդ, ով ստեղծել է գիտական դպրոց՝ ղեկավարելով շուրջ 3 տասնյակ գիտա-



կան՝ թեկնածուական եւ դոկտորական ատենախոսություններ», - նշել է նախարարը՝ ավելացնելով, որ Թռչունյանը, իբրեւ ԲՈՂ-ի նախկին նախագահ, զգալի ներդրում է ունեցել նաեւ գիտական վարչարարության ասպարեզում:

Մեծ գիտնականի որդին՝ Կարեն Թռչունյանը, հպարտությամբ է պատմում, որ հայրը, որպես հրավիրված դասախոս, հանդես է եկել մի շարք երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում. դասավանդել է ԱՄՆ 22 նահանգների առաջատար բուհերում, որոնց թվում՝ Հիլկադոյի, Բերկլիի եւ Սթենֆորդի համալսարաններում: Նրա գիտական հոդվածների մեծ մասը հրատարակվել է արտերկրի վարկանիշային գիտական ամսագրերում:

Նշենք, որ Կարեն Թռչունյանը, շարունակելով հայրիկի ճանապարհը, զբաղվում է գիտությամբ եւ նպատակ

ունի հասնել հոր գիտական թեզիսների ապացուցմանն ու գրանցմանը. «Ես սա ընդունում եմ որպես պարտավորություն՝ շարունակել նրա կենսաֆիզիկայի եւ կենսաքիմիայի գիտական հետազոտությունների գործը»:

ԵՊՀ ռեկտորատի նիստում հակիրճ ներկայացվել է նաեւ պրոֆեսոր Արմեն Թռչունյանի գիտական գործունեությունը՝ նրա ավանդները, ստացած պարգևներն ու մանկավարժագիտական գործունեությունը Հայաստանում եւ արտերկրում: Նշենք, որ 2004 թվականին Արմեն Թռչունյանն արժանացել է ՀՀ ԿԳՆ ոսկե հուշանշանի, եղել է ՀՀ Նախագահի մրցանակակիր՝ բնագիտության բնագավառում:

Ռեկտորատի նիստին ներկա է եղել նաեւ պրոֆեսորի այրին՝ տիկին Անահիտը:

Հարունակությունը՝ էջ 6

Շնորհավորում ենք

«Մենք 15 տարեկան ենք»

15 տարիների մեր աշխատանքի լավագույն արդյունքը 21-րդ դարի մրցունակ, ստեղծարար, մեր երկիրը կրթությամբ վերափոխող պայծառ սերունդն է:

Շնորհակալ ենք «Այբ»-ի մեծ ընտանիքի բոլոր-բոլոր անդամներին՝ հիմնադիրներին, բարերարներին, թիմին, երեխաներին, ուսուցիչներին, կրթական եւ գործընկեր կառույցներին, կրթության գերագանցության մեր տեսլականը կիսող բոլոր մարդկանց:

Առցանց իրականության պայմաններում մենք շարունակում ենք իրագործել մեր բոլոր նախագծերն ու առաքելությունը՝ ժամանակի պահանջներին եւ զարգացումներին համապատասխան՝ լավագույն կրթությունն օրեցօր հասանելի դարձնելով է՛լ ավելի շատ շահառուների՝ Հայաստանի Հանրապետությունում, Արցախում ու սփյուռքում: Մեր 15-ամյա գործը շուտով նոր արտահայտություն ու շարունակություն կստանա՝ դառնալով ապագայի դպրոցի նորարար մոդել եւ միաժամանակ բացահայտելով ազգային կրթության մեր լավագույն զենք:

Ուրախ եւ հպարտ ենք այբական մեծ ընտանիք ունենալու եւ ձեզ հետ միասին մեր ճանապարհն անցնելու համար:

Լավագույնը դեռ առջեւում է:

«ԱՅԲ» կրթական հիմնադրամ



«Տարվա լավագույնները»

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն ամփոփել է «Տարվա լավագույնները» մրցույթի արդյունքները, որոնց հիման վրա կարգավորվեն ծրագրերի հեղինակները: Մրցույթին ներկայացվել է 53 հայտ, որից 35-ը եղել է անհատական, իսկ 18-ը՝ խմբային: «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 42, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 2, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաստանողական գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 7, «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1, «Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաստանողական գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 1 ծրագիր: «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում որեւէ հայտ չի ներկայացվել: Ներկայացված ծրագրային առաջարկների գնահատման արդյունքում հանձնաժողովի որոշմամբ սահմանված նվազագույն 50 միավորի շե-

Հայտնի են մրցույթի հաղթողները

մը հաղթահարել է 41 ծրագրային առաջարկ, որից 27-ը՝ անհատական, իսկ 14-ը՝ խմբային:

Ըստ այդմ՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել 33 ծրագիր: 1-ին տասնյակում տեղ են գտել հետեւյալ ծրագրերը՝

՝ «Արտակարգ իրավիճակներում աշակերտների ուսումնական գործընթացի շարունակականության ապահովումը. հեռավար դասընթացների ստեղծում» - Գայանե Սիմոնյան, Լուսինե Ավագյան

՝ «Հայ մշակույթի պատմություն» հեռավար դասընթացի ստեղծում» - Մելիք Սկրտչյան,

՝ «Ինչպե՞ս կողմնորոշվել մասնագիտությունների աշխարհում» - Նարինե Մուրադյան

՝ «Էլեկտրոնային կրթական պաշարների ստեղծում» - Ռուզաննա Ստեփանյան,

՝ «Իսկական բարեկամությունը տարիների փորձություն ունի...» հայ-իտալական մանկավարժական-նորարարական միջմշակութային ծրագիր - Անուշ Եղոյան, Անուշ Թորոսյան, Նազիկ Գիշյան

՝ «Հեքիաթն է կանչում» - Ալբինե Ազատյան,

՝ «Աշխարհագետների գիտահե-

տազոտական շարժում» - Անուշ Համբարձումյան, Տիգրան Ենգիբարյան,

՝ «Ուսուցիչների հետազոտական հմտությունների զարգացումը սեփական փորձառության ուսումնասիրության միջոցով» - Ռոզա Խաչատրյան, Նաիրա Ասլանյան,

՝ «Էկո-լաբորատորիաները տարրական դասարաններում» - Գայանե Լաչինյան, Նազանի Հարությունյան,

՝ «Ուսուցիչ 24/7 ձեւաչափով» - Հասմիկ Հակոբյան:

«Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթող են ճանաչվել «Շրջված դասարան (ուսուցման կազմակերպման տարբեր եղանակներ, հեռավար ուսուցման ձեւեր)» եւ «Դպրոցի կառավարման ծրագիր» նախագծերը:

Առաջին ծրագիրը ներկայացրել են ուսուցիչներ Սարգիս Խաչատրյանը եւ Նարինե Սարգսյանը, իսկ երկրորդը՝ Աննա Բալյանը:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաստանողական գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում լավագույն են ճանաչվել հետեւյալ ծրագրերը՝

՝ «Մասնագիտական կողմնորոշումը՝ որպես Կարմիրգյուղ համայնքի զարգաց-

ման գրավական» - Հասմիկ Ումրշատյան,

՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում բռնության ռիսկերի նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված ծրագիր» - Աստղիկ Շահնազարյան,

՝ «Էքսկուրսիաները պատմության դասավանդման արդյունավետության բարձրացման միջոց» - Լաուրա Գրքիկյան,

՝ «Մեդիաիմացությունը եւ գրականությունը նորարարական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմամբ» - Լուսինե Կոստանյան,

՝ «Դասողական աշխատանքների կազմակերպումը դպրոցում» - Արմինե Պետրոսյան:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթել է «Թիմային եւ արդյունավետ մանկապարտեզ» ծրագիրը, որը ներկայացրել է Փառանգեն Խանգելոյանը:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաստանողական գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում ներկայացված 1 ծրագրային առաջարկը չի հաղթահարել նվազագույն միավորային շեմը:

Համակարգ

Էրազմուս +

Դպրոցի զարգացման ծրագրի պահանջները եւ ձեւաչափը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները եւ ձեւաչափը:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը, որն հաստատության 5 տարվա ռազմավարական փաստաթուղթն է, ընդգրկում է մի քանի կարեւոր բաղադրիչներ. մասնավորապես՝ իրավիճակի վերլուծություն, նպատակների եւ խնդիրների սահմանում, նպատակների իրականացումն ապահովող միջոցառումների հաջորդականությունն ու ժամանակացույց, պատասխանատուներ, արդյունքների գնահատման չափանիշներ, ռիսկեր, բյուջե եւ վերահսկողության մեխանիզմներ:

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս պարտադիր է նաեւ հաստատության առաքելության սահմանումը, դպրոցի ուժեղ եւ թույլ կողմերի բացահայտումը, հիմնախնդիրների ձեւակերպումը, դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների նկարագրությունը, ֆինանսավորման մեխանիզմները եւ այլն: Ցանկացած գործողության համար պետք է սահմանել ակնկալվող արդյունք, որը պետք է լինի չափելի, արտահայտվի կոնկրետ ցուցանիշներով՝ քվեր, տոկոսներ, բնութագրիչներ: Յուրաքանչյուր գործողության համար պետք է կատարվի նաեւ ֆինանսական հաշվարկ՝ նշելով ֆինանսավորման աղբյուրը:

Ձարգացման ծրագիրը հաստատում եւ դրա իրականացման ընթացքը վերահսկում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված աշխատանքային պլանների կատարողականների հաստատման միջոցով: Այդ նպատակով կառավարման խորհուրդը տարեկան առնվազն երկու անգամ քննարկում է ծրագրի դրույթների կատարողականները՝ տալով համապատասխան գնահատականներ, տնօրենին ապահովելով խորհրդատվական եւ այլ աջակցության շարունակական տրամադրում: Դպրոցի զարգացման ծրագրի իրականացմանը կարող են ներգրավվել համայնքի եւ այլ հաստատությունների ներկայացուցիչներ:

Համաձայն հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության՝ զարգացման ծրագիրը տնօրենի հավակնորդից պահանջվող հիմնական փաստաթղթերից է, որի մշակման համար հավակնորդը հանդիպում է սովորողների, ծնողների եւ մանկավարժների հետ, ապա ծրագիրը ներկայացնում մանկավարժական եւ ծնողական խորհուրդներին՝ նրանց քվեով ստանալու համար: Ընտրվելուց հետո զարգացման ծրագիրը դառնում է տնօրենի գործունեության հիմնական ուղեցույց, որը միաժամանակ նրա գործունեության արդյունավետության գնահատման առաջնային չափանիշն է: Ձարգացման ծրագիրը չկատարելը կամ ոչ բավարար կատարելը օրինական հիմք է՝ տնօրենին անվստահություն հայտնելու համար:

Կարելորվել է ծրագրի շարունակականությունը

Նախարար Վահրամ Դումանյանն ընդունել է «Էրազմուս+» ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովային եւ ծրագրի փորձագետ Արայիկ Նավոյանին: Հանդիպմանը մասնակցել են նաեւ նախարարի տեղակալ Արթուր Սարտիրոսյանն ու նախարարի խորհրդական Սամվել Կարաբեկյանը:

Քննարկվել են Եվրամիության աջակցությամբ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում «Էրազմուս+» ծրագրով իրականացվող համագործակցության, բուհերի կարողությունների զարգացմանը, ուսանողների, դասախոսների եւ բուհերի աշխատակազմերի շարժունությանն ու նորարարությանը միտված ծրագրերը:

Ընդգծելով, որ «Էրազմուս+» ծրագրի իրականացումը Եվրամիության կարեւոր ներդրումներից մեկն է Հայաստանում, նախարար Վահրամ Դումանյանը կարեւորել է համագործակցության շարունակությունը եւ առաջարկել հետագա փուլում շեշտը դնել բարձրագույն կրթության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումներ նախատեսող ծրագրերի վրա: Լանա Կառլովայն նշել է, որ անցյալ տարի ավարտված Էրազմուս+ գործողությունների 2014-2020 թվականների շրջանակում ընթացքում Հայաստանում իրականացվել է շուրջ 30 ծրագիր, որի շրջանակում հայաստանյան բուհերը եվրոպական եւ տարածաշրջանային համալսարանների հետ համագործակցելով ձեւակերպել են կոնսորցիումներ եւ ընդգրկվել տարբեր ծրագրերում: Նշված ծրագրերից 10-ն արդեն ավարտված է, 7-ը մեկնարկելու է առաջիկայում, իսկ մնացածն ընթացքի մեջ են կամ ավարտական փուլերում: Նոր մեկ-



նարկող ծրագրերից մեկով Հայաստանի բուհական համակարգում առաջին անգամ կփորձարկվի աշխատանքի վրա հիմնված ուսուցման դուալ կրթության մոդելը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ «Էրազմուս+» ծրագրի հաջորդ 2021-27 թվականների փուլով նախատեսված աշխատանքները:

Նախարարը կարեւորել է միջազգային համագործակցության ծրագրերում կրթական հանրության ավելի լայն ընդգրկվածությունը, այդ ծրագրերի չափելի արդյունքները՝ պատրաստակամություն հայտնելով ապահովել ԿԳՄՍ նախարարության առավել սերտ կապը «Էրազմուս+» գրասենյակի հետ բոլոր այն ծրագրերի ուղղությամբ, որոնք կնպաստեն Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի զարգացմանը, բուհերի կառուցվածքային եւ ծրագրային բարեփոխումներին: Լանա Կառլովայի խոսքով՝ իրականացվող ծրագրերի արդյունավետության առաջնային նախադրյալներից մեկը կադրերի ճիշտ ընտրությամբ է:

յունն է, որոնք հետագայում իրենց ծրագրային փորձն ու գիտելիքներն արդյունավետ կփոխանցեն բուհերի հնարավոր շահառուներին:

Նշվել է, որ «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ՀՀ բուհերը համագործակցում են Լեհաստանի, Իսպանիայի, Իտալիայի, Գերմանիայի, Բուլղարիայի, Ֆրանսիայի, Խորվաթիայի, Միացյալ Թագավորության, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի եւ մի շարք այլ երկրների բուհերի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումներին առնչվող մի շարք խնդիրներ:

Հավելելով, որ «Էրազմուս+» ծրագիրն հիմնվել է՝ 1996 թվականից ի վեր Հայաստանում գործող Տեմպոս ծրագրի մասնագիտական հենքի վրա: 2008 թվականից գործում է բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների փորձագետների (ԲԿԲՓ) ազգային խումբը:

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ռեկտորատի ընդլայնված նիստում

սկիզբը՝ էջ 5

Նիստի օրակարգում ներառված էր նաեւ երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման հարցը: Քննարկման ընթացքում նշվել է, որ ԿԳՄՍ նախարարությունը շրջաբերականով դիմել է բուհերին՝ առաջարկելով դասերը կազմակերպել առավելապես առկա ձեւաչափով՝ պահպանելով համավարակի կանխարգելման կանոնները: Միաժամանակ, նախարարը նշել է, որ բուհերն ունեն նպաստների կամ ազատություն, եւ իրենք պետք է որոշեն ուսումնական գործընթացի կազմակերպման ձեւաչափերը:

Ռեկտորատի նիստի մասնակիցները նախարարին ուղղել են բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերել են պատերազմի մասնակից ուսանողների, մասնակիցների ուսանող զավակների, կնոջ կամ ամուսնու ուսման վարձավճարների փոխհատուցմանը, տարկետման կարգին, պետական բյուջեի ոլորտային հատկացումներին եւ այլ խնդիրներին:

ԵՊՀ ռեկտորատի նիստում Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանն անդրադարձել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը տեղի ունեցած պատերազմական գործողությունների մասնակիցների համար պետության սահմա-

նած ուսման վարձավճարի փոխհատուցման ծրագրին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառավարության աջակցության ծրագրով փոխհատուցվում է միայն 2020-21 ուստարվա առաջին կիսամյակի վարձավճարը, ԵՊՀ ուսխորհրդի նախագահը հարց է ուղղել նախարարին, թե արդյոք աջակցության ծրագրից օգտվելու են այս պահին պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող այն ուսանողները, որոնք զորացրվելու են հետագա երկու տարիներին, երբ վերը նշված կիսամյակն արդեն անցած կլինի, իսկ վարձավճարի հատուցումը՝ ժամանակավրեպ: Բացի դրանից՝ կա մտահոգություն, որ պատերազմական գործողությունների որոշ մասնակիցներ համապատասխան փաստաթղթային ձեւակերպումներ չունենալու պատճառով կարող են զրկվել աջակցությունից:

Նախարար Վ. Դումանյանի պարզաբանմամբ՝ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող բոլոր ուսանողները, եթե նրանք մասնակցել են մարտական գործողություններին, աջակցության ծրագրի շահառու են:

«Եթե ուսանողն ընդհատել է կրթությունը, զորակոչվել է բանակ, որտեղ մասնակցել է պատերազմի, հետեւաբար զորացրվելուց հետո, եթե նա զինգրքույկում կունենա մարտական գործողության

մասնակցության մասին գրառում եւ համապատասխան կնիք, ապա նա միանշանակ Կառավարության աջակցության ծրագրից կօգտվի: Մինչեւ 2022 թվականի ավարտը մենք դեռ ունենալու ենք պատերազմին մասնակից զորացրված ուսանողներ, նրանք մեկ կիսամյակի ուսման վարձի չափով փոխհատուցում անպայման ստանալու են: Եթե ուսանողը մինչեւ զորակոչվելն արդեն վճարել է 2020-21 ուստարվա առաջին կիսամյակի վարձը, ապա Կառավարության փոխհատուցումը կհամարվի գերավճար եւ կփոխանցվի որպես հաջորդ կիսամյակի վարձավճար: Նույնիսկ, եթե ուսանողի կրթությունն արդեն ավարտվել է, եւ նա արդեն վճարել է, առաջին կիսամյակի վարձավճարը կվերադարձվի նրան: Իհարկե, սա նվազագույնն է, որ պետությունը կարող է անել նրանց համար»,- նշել է Վ. Դումանյանը եւ հավելել, որ աջակցության ծրագրով ուսման վարձի փոխհատուցման գումարը կտրվի պետական բյուջեի միջոցներից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ովքեր կարող են լինել աջակցության ծրագրի շահառու, ապա այս դեպքում կա հստակ մոտեցում. պետք է լինի հիմք, այսինքն՝ գրառում, որ տվյալ անձը մասնակցել է մարտական գործողություններին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



Աշխարհի հետ

18 մասնագետ ստացավ միջազգային թեստի վկայական

Բրիտանական խորհուրդն անգլերենի 18 մասնագետի հանձնել է Քեմբրիջի համալսարանի TKT միջազգային թեստի վկայականներ՝ քննությունը հաջողությամբ հանձնելու կապակցությամբ: TKT թեստը դասավանդման միջազգային որակավորում շնորհող մասնագիտական քննություն է:

Միջոցառմանը մասնակցել են 33 ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժաննա Անդրեասյանը, 33-ում Միացյալ Թագավորության գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ֆեյզին և Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Արեփիկ Սարիբեկյանը:

Ողջունելով միջոցառման մասնակից-

ներին՝ փոխնախարար ժաննա Անդրեասյանը կատարած աշխատանքների համար շնորհակալություն է հայտնել բոլոր ուսուցիչներին և հիշեցրել, որ օրեր առաջ նշվել է Կրթության միջազգային օրը. «Այդ տոնի ամենակարևոր թեմաներից մեկը սովորող հերոսն էր: Կարծում եմ, որ վերջին մեկ տարվա ընթացքում մեր բոլոր ուսուցիչները հերոս են եղել. նրանք բախվել են բավականին մեծ մարտահրավերների՝ Covid-ը, իսկ հետո՝ նաև Արցախյան պատերազմը: Այս ընթացքում մեր ուսուցիչները կրթել են ոչ միայն Հայաստանի, այլև Արցախի բազմաթիվ երեխաների, և ես շատ բարձր եմ գնահատում նրանց ջանքերը»: Փաստելով, որ Բրիտանական խորհուր-

դը ԿԳՄՍ հիմնական գործընկերներից մեկն է, եւ վերոնշյալ նախագիծը շատ կարևոր է, նախարարի տեղակալը շեշտել է, որ խոսքը ոչ միայն անգլերեն դասավանդելու, այլև համայնքներում փոփոխություններ բերելու, ուսուցիչների միջև կապ հաստատելու, մեթոդաբանության, դասավանդման մեթոդների մասին է. «Այս ամենը շատ կարևոր է, հետևաբար մենք Բրիտանական խորհրդի հետ մտածում ենք այս տարի ուսուցիչների մասնագիտական զարգացման շրջանակն ընդլայնելու մասին: Ուրախ եմ, որ ունենք այս հաջողված փորձը և հետագայում եւս պետք է ջանք չխնայենք՝ ավելի լավ ուսումնական միջավայր

ել մեր ուսուցիչների համար ավելի լավ կրթական ծրագրեր ունենալու համար»: Միջոցառման մասնակիցների թվում էին ուսուցիչների աշխատանքային խմբերի 12 համակարգող և 6 թրեյներ: Այս խմբերը հիմնվել են Միացյալ Թագավորության կողմից ֆինանսավորվող «Անգլերենի ակումբներ» ծրագրի շրջանակում և ծառայում են որպես փորձի և գիտելիքի փոխանակման հարթակ՝ հնարավորություն ընձեռելով առանձին բնակավայրի ուսուցիչների քննարկել նոր գաղափարներ, միասին օգտագործել իրենց դասավանդման փորձը և վերլուծել տեղական կարիքները:

Յեղիսե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ոչ պետական

Քննարկվել են ֆինանսավորման խնդիրներ

33 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ ժաննա Անդրեասյանը հանդիպել է ոչ պետական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների պատասխանատուներին: Քննարկվել են կրթության կազմակերպմանը վերաբերող մի շարք հարցեր, մասնավորապես, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել ուղրտում նախանշվող հարկային քաղաքականության առնչությամբ:

Նախարարի տեղակալը նշել է, որ կրթության քաղաքականության արդյունավետության տեսանկյունից կարևոր է ֆինանսավորման ծավալների պահպանումը, որ կորոնավիրուսի համավարակի պայմաններում կրթության ոլորտի համար ամբողջ աշխարհում դարձել է նոր մարտահրավեր և դիտվում է որպես կրթության զարգացման խոչընդոտ: Համավարակով եւ հետպատերազմական իրավիճակով պայմանավորված տնտեսական բարդ ժամանակաշրջանում համակարգի գործունեությանը չվնասելու նախապայմանը մեր երկրում եւս առաջնահերթ խնդիր է: «Հատկապես այս պայ-



մաններում կրթությունն ունի առաջնահերթ նշանակություն հասարակության և պետության զարգացման համար: Ակնկալում ենք ձեզ հետ համագործակցությամբ ստանալ փաստարկված առաջարկություններ և հիմնավորումներ, որպեսզի դրանք հետագայում ներկայացնենք կառավարության քննարկմանը՝ ուղրտային արդյունավետ քաղաքականության համատեքստում», - դիմելով ներկաներին՝ նշել է Ժ. Անդրեասյանը: Նա

միաժամանակ շեշտել է, որ ներկա պահին որեւէ նախագիծ չի շրջանառվում և կրթության ոլորտի հարկային դրույքաչափերի փոփոխության որեւէ կոնկրետ առաջարկություն չի ներկայացվել: Սակայն, ըստ փոխնախարարի, նախատեսվող նախագծերի շուրջ այս փուլից քննարկումներ սկսելը կարևոր է դրանց մշակման ընթացքում կրթության ոլորտի խնդիրներն ու առանձնահատկությունները հաշվի առնելու նկատառումով:

Ըստ մասնավոր դպրոցների ներկայացրած նախնական հետազոտության՝ ոչ պետական հաստատություններում սովորող շուրջ 10 հազար աշակերտների մոտ 68 տոկոսը վարձավճարի բարձրացման պարագայում չի հաճախի մասնավոր դպրոց, ինչը բացասական ազդեցություն կունենա ուղրտի համար: Ընդգծելով, որ ոչ պետական դպրոց հաճախելը ծնողի և երեխայի սահմանադրական իրավունքն է, հանդիպման մասնակիցները կարևորել են մասնավոր և այլընտրանքային դպրոցների գործունեության միջազգային փորձի դիտարկումը նաև ընդգծել, որ մեր երկրում այս ոլորտը զարգացել է՝ ապահովելով կրթական շերտերի մրցակցություն:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ներկայացված առաջարկները քննարկել կառավարությունում:

Հանդիպման ընթացքում մասնավոր դպրոցների պատասխանատուները ներկայացրել են հարկային փոփոխության դեպքում հնարավոր սոցիալական հետեւանքները, կարևորել ոչ պետական հաստատությունների տնտեսական նշանակությունն ու ներդրումը ուղրտում:

Դրամաշնորհ

Մանկապարտեզ չունեցող համայնքների համար

Մինչեւ 2023 թվականը նախադպրոցական ծառայությունների ծավալը, մասնավորապես՝ երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում հասցվելու է առնվազն 70 տոկոսի: Այս պահանջը սահմանված է 33 կառավարության գործունեության ծրագրով:

Հայաստանի շուրջ 270 բնակավայրերում այս պահին նախադպրոցական հաստատություններ չկան, ապահովված չէ նաև համապատասխան կրթական ծառայության հասանելիությունը:

Նախադպրոցական հաստատություններ չունեցող բնակավայրերում երեխաների թիվը հիմնականում քիչ է, ուստի դասական մանկապարտեզների հիմնումը նման համայնքներում ծախսարդյունավետ չէ: Խնդրի լուծման նպատակով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը փոքրաթիվ

երեխաներ ունեցող համայնքներում նախատեսում է այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների հիմնում: ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների ապահովումն իրականացվելու է պետական դրամաշնորհի միջոցով:

Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների դրամաշնորհային ծրագրի մրցույթը նախատեսվում է առաջիկայում: Համայնքները հնարավորություն կունենան առաջարկվող 8 մոդելային նախագծերից ընտրել առավել նպատակային տարբերակն իրենց համայնքի համար: Առաջարկվող տիպային մոդելները տարբեր են. օրինակ՝ նախադպրոցական ծառայությունը կարող է կազմակերպվել տվյալ համայնքի դպրոցում կամ համայնքային որեւէ կառույցի տարածքում: Կարող է նման ծառայութ-

յուն մատուցվել նաև համապատասխան պայմաններ ունեցող անհատական բնակելի տանը: Ըստ տիպային մոդելների՝ առաջարկվում է նաև շարժական նախադպրոցական ծառայությունների կազմակերպման հնարավորություն:

Առաջնային խնդիրը նախադպրոցական հաստատությունների համար սահմանված նորմատիվ պահանջների ապահովումն է:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ 2021 թվականի պետական բյուջեում այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների ապահովման համար նախատեսված է շուրջ 154 մլն դրամ գումար: Նպատակը նախադպրոցական ծառայությունները հնարավորինս հասանելի դարձնելն է նպատակով, որ երեխաները վաղ տարիքից ունենան զարգացման և կարողությունների ընդլայնման հնարավորություն: Դրամաշնորհային մրցույթի

կարելու նախապայմաններից մեկն այն է, որ հետագայում համայնքները պահպանեն ստեղծված ենթակառուցվածքները՝ ապահովելով նախադպրոցական ծառայությունների շարունակություն: Բոլոր պահանջներն ու պայմանները մասնաձև կներկայացվեն դրամաշնորհի մրցույթում:

Նշենք, որ ներկայումս, համավարակով պայմանավորված, նախադպրոցական հաստատությունների գործունեություն սահմանափակված է. նոր ընդունելություն մանկապարտեզներում առայժմ չի կատարվում: Խնդրի լուծման արդյունավետ տարբերակ գտնելու նպատակով քննարկումներ են ընթանում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության և տարածքային կառավարման նախարարությունների միջև:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշխարհի հետ

Մեկնարկել է «ԳիտՄեՐուև» ծրագրի 2-րդ փուլը

Հայաստանի Ամերիկյան համալսարանը, ԳՀ-ում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ, 2019 թվականից իրականացնում է միջին և ավագ դպրոցներում «Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏԾՄ)» կրթության բարելավման եռամյա ծրագիր, որն առավել հայտնի է «ԳիտՄեՐուև» անվամբ: Ծրագրի նպատակն է ԲՏԾՄ առարկաներն աշակերտների համար դարձնել հետաքրքիր և հաղթահարելի՝ այդպիսով մեծացնել այս ոլորտում մասնագիտանալ ցանկացողների թիվը:

Տեղի է ունեցել ծրագրի 2-րդ փուլի մեկնարկին նվիրված առցանց միջոցառում, որին մասնակցել են ծրագրում ներգրավված ուսուցիչները և փորձագետները: Միջոցառման մասնակցներին ողջունել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ **Կարին Մարկիդեսը** և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մշակութային կցորդ **Երիկա Քինգը**:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ ԿԳՄՍ փոխնախարարը կարեւորել է «ԳիտՄեՐուև» ծրագիրը: «Խորհրդանշական է, որ ծրագրի 2-րդ փուլը մեկնարկում է հանրակրթության պետական

չափորոշիչի հաստատումից հետո, որով հստակ ամրագրվում է պետության կրթական քաղաքականությունը, մասնավորապես՝ ԲՏԾՄ ուղղությունը զարգացնելու և կրթական արդյունքը բազմապատկելու առումով: Հետեւաբար, պետական քաղաքականության և այս ծրագրի միջեւ կապն ակնհայտ է, և ինչ-որ առումով ծրագիրը կարող է դառնալ չափորոշիչ փորձարկման, ինչպես նաեւ մարդկային կարողությունների զարգացման հրաշալի հարթակ», - նշել է նախարարի տեղակալը՝ կարողությունների զարգացման գործընթացում շեշտադրելով մարզերի ուսուցիչների ներգրավման հնարավորությունը: Փոխնախարարը նաեւ կարեւորել է, որ ծրագրի շրջանակում մշակված ռեսուրսներն այս տարի հասանելի են դառնալու «ԳիտՄեՐուև»-ի հարթակում, որը, ըստ փոխնախարարի, մեծ շտեմարան ու հանրային բարիք կհանդիսանա հանրապետության ուսուցչական համայնքի շարունակական զարգացման և ռեսուրսների թարմացման համարը: Միջոցառման մասնակիցներին մաղթելով արդյունավետ աշխատանք՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստակամ է ներդնել բոլոր ջանքերը՝ ծրագրի հաջող տարածման, ընդլայնման և արդյունքների շարունակական զարգացման համար:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են «Ուսումնառության պլանավորում» և «Ակտիվ ուսումնառություն ու դրա մեթոդները» դասընթացները: Նշվել է, որ ծրագրի հիմնական ուղղություններից է դասավանդման և ուսումնառության համար նոր տեսակի ռեսուրսների մշակումը: Դրանցում ներկառուցված են ժամանակակից մանկավարժական պրակտիկաներն ու գաղափարները, որոնք հիմնված են ակտիվ ուսումնառության սկզբունքների վրա: Նախորդ տարվա ընթացքում, չնայած համաճարակին, ծրագրի շրջանակում իրականացվել է 15 աշխատանք: ՀՀ տարբեր մարզերի հանրակրթական դպրոցների 20 ուսուցիչ մասնակցել է արդի դասավանդման մոտեցումների վերաբերյալ քննարկումներին և դրանք կիրառել մշակված շուրջ 300 դասի ընթացքում:

Այդ ռեսուրսները փորձարկվել են նաեւ ծրագրի ամառային առցանց գիտական ճամբարներում, որոնցում ներգրավված է շուրջ 600 սովորող՝ ՀՀ բոլոր մարզերից: ճամբարներում մշակված ռեսուրսներով դասավանդել է հանրակրթական դպրոցների շուրջ 110 ուսուցիչ: Ռեսուրսների հեղինակները դիտարկել են դասերը և քննարկումների արդյունքում բարելավել մշակված ռեսուրսները: ճամբարներում արդյունավետ ներդրվել է բարձր է գնահատվել ուսուցիչ օգնականների աշխատանքը և ինստիտուտը: Ուսուցչի օգնականի դերում հանդես են եկել ԲՏԾՄ ոլորտում ՀՀ և արտասահմանյան բուհերում սովորող երիտասարդներ: ճամբարների ընթացքում հաջողությամբ իրականացվել են նաեւ մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, որտեղ Հայաստանի և արտերկրի մի շարք ուսանողներ, փորձագետներ և երիտասարդ գիտնականներ աշակերտներին, ուսուցիչներին և ծնողներին պարզ և մատչելի ներկայացրել են ԲՏԾՄ ոլորտի այնպիսի արդի և պահանջված մասնագիտություններ, ինչպիսիք են՝ տվյալագիտությունը, կենսաինֆորմատիկան, նյութագիտությունը, գենետիկական ինժեներիան և այլն:

Ներկայում ուսուցիչների թիվը շարունակում է ռեսուրսների մշակման աշխատանքները և առաջիկա ամսվա ընթացքում պլանավորում ավարտին հասցնել ԲՏԾՄ առարկաներից և ևս 600 ռեսուրսների մշակումը: Այս բոլորը ռեսուրսները անվճար հասանելի կդառնան ծրագրի հարթակում, որի թողարկումը նախատեսվում է 2021 թվականի գարնանը: 2-րդ տարվա աշխատանքներում կներգրավվեն նոր ուսուցիչներ, որոնք կշարունակեն ռեսուրսների մշակման աշխատանքները՝ համալրելով հանրակրթական պետական և առարկայական նոր չափորոշիչներին համապատասխան մշակվող ռեսուրսների շտեմարանը:

Հ. Հ.

Բժշկական համալսարան

Կգործի ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ներկայացուցիչները ՀՀ մի շարք բուհերում երկշաբաթյա մոնիտորինգային այցեր են իրականացրել՝ Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ընթացիկ ծրագրերի մշտադիտարկման նպատակով:

Մասնավորապես՝ Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում միջազգային չափանիշներին համապատասխան գիտահետազոտական կենտրոն է ստեղծվում, որը կարող է դառնալ հիմնարար գիտության զարգացման գերազանցության հարթակ և մրցունակ լինել եվրոպական նմանատիպ վավագույն լաբորատորիաների հետ:

ԵՊԲՀ դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է՝ ուղեղի հետազոտությունների խթանման միջոցով զարգացնել համալսարանի հետազոտական և նորարարական կարողությունները՝ շեշտը դնելով ուղեղի հիվանդությունների բուժման բջջային և դեղորայքային նյարդապաշտան մեխանիզմների վրա: «Նախագծի օգնությամբ ուղեղի ուսումնասիրության հետազոտությունները կկարողանան որոշել Հայաստանի տեղը միջազգային գիտական քարտեզի վրա: Այս ծրագիրը ցույց տվեց, որ մենք ունենք մրցունակ լինելու ներուժ ու հավակնոտ գաղափարները: Սա այն հիմնաքարն է լինելու, որը թույլ կտա զնալ դեպի գերազանցության կենտրոնի հիմնում», - նշում



է ԵՊԲՀ-ի գիտության գծով պրոռեկտոր, դրամաշնորհային ծրագրի ղեկավար, պրոֆեսոր **Կոնստանտին Ենկոյան**՝ հավելելով, որ առաջիկայում միջազգային համալսարանների հետ համագործակցությամբ նախատեսվում է հաստատել ներդրողության հետազոտությունների կառուցվածքը, կատարելագործել երիտասարդ հետազոտողների հմտությունները, ընդլայնել հետազոտական կարիերայի հնարավորությունները, զարգացնել համալսարանի նորարարական կարողությունները, ինչի արդյունքում համալսարանն ավելի ներկայանալի կլինի գիտական հանրության առջև:

«Աջակցություն Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը» բաղադրիչի ղեկավար **Լիանա Մամյանն** իր հերթին նշել է, որ համավարակի, ինչպես նաեւ պատերազմական իրավի-

ճակով պայմանավորված՝ բուհի իրականացրած ծրագրային գործողությունները և զնումների գործընթացները որոշակիորեն հետ են մնացել ժամանակացույցերով և զնումների պլանով սահմանված ժամկետներից: Նրա խոսքով՝ բուհը պետք է արդյունավետ և հետեւողական քայլեր ձեռնարկի՝ պայմանագրով սահմանված բոլոր գործողությունները պատշաճ ժամկետներում իրականացնելու, ավարտին հասցնելու, ինչպես նաեւ ծրագրով ամրագրված ցուցիչներին հասնելու համար:

Մշտադիտարկման արդյունքում ներկաներն ամրագրել են, որ բուհի տրամադրած անհրաժեշտ տարածքներում դեռևս ընթանում են համապատասխան շինարարական աշխատանքները: Դրամաշնորհային ծրագրի պատասխանատուների հավաստիացմամբ՝ հիմնադրամի աշխատանքները չեն խոչընդո-

տի սարքավորումների մատակարարման գործընթացին և կավարտվեն մինչև դրա իրականացումը:

Կենտրոնի հնարավորություններն ուսումնական գործընթացում լավագույնս կիրառելու նպատակով դրամաշնորհային ծրագրի այս փուլում իրականացվել է նաեւ համապատասխան կրթական բովանդակության ստեղծում: Մասնավորապես, մի շարք քայլեր են ձեռնարկվել ԵՊԲՀ-ի կրթական գործընթացի բովանդակության արդիականացման ուղղությամբ, ընթացքի մեջ են ուսանողների, օրդինատորների, ասպիրանտների և մասնագետների համար ուսումնամեթոդական ծրագրերով պիլոտային ծրագրերի իրականացման, հետդիպլոմային կրթության համար երկլեզու ուսումնական և մի քանի այլ ձեռնարկների մշակման աշխատանքները:

Անդրադարձ է եղել նաեւ կոնսորցիումի գործընկերների հետ համագործակցության ընթացքին: Դրամաշնորհային ծրագրի շրջանակում կոնսորցիումի անդամ հաստատությունների՝ «ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի» և «ԷԵՆԴ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ ընթացքի մեջ են ժամանակակից հետազոտական մեթոդների դասավանդման գիտակրթական ծրագրերի մշակման, հետազոտական նորագույն մեթոդների ներդրմամբ իրականացվող գիտահետազոտական ծրագրերի մշակման և գիտական արդյունքների հրապարակման աշխատանքները:





## Նոր կարգ

# Ինչպես են անվանակոչվելու պետական ուսումնական հաստատությունները

Ուժի մեջ է մտել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հստատված է պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության նոր կարգը:

### Անվանակոչման ընթացակարգ

Ըստ ներկայացված նախագծի՝ պետական ուսումնական հաստատության անվանակոչման մասին որոշումներն ընդունում է ուսումնական հաստատության լիազոր մարմինը՝ ըստ ենթակայության: Դասասենյակների, կաբինետների եւ դահլիճի անվանակոչման մասին որոշումներն էլ ձայների մեծամասնությամբ ընդունում է մանկավարժական խորհուրդը: Անվանակոչման առաջարկություններ կարող են ներկայացնել ՀՀ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, ուսումնական հաստատությունը, հասարակական կազմակերպությունները, իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:

Առաջարկությունը պետք է պարունակի տեղեկություններ հաստատության հասցեի, առաջարկվող եւ գործող անվանումների մասին, ինչպես նաեւ ունենա հիմնավորում: Պարտադիր է նաեւ համայնքի եւ ուսումնական հաստատության (կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, մանկավարժական եւ ծնողական խորհուրդների) համաձայնությունը, որի բացակայության դեպքում անվանակոչության առա-

ջարկությունը չի կարող քննարկվել: Առաջարկը ստանալուց հետո լիազոր մարմինը մեկամսյա ժամկետում քննարկում եւ ընդունում է որոշում: Անվանափոխումը մերժելու դեպքում նշվում են պատճառները: Հաստատելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում անվանափոխման որոշումը տրամադրվում է ուսումնական հաստատությանը՝ կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու եւ պետական ռեգիստր ներկայացնելու նպատակով:

### Ում անվամբ կարող է կոչվել ուսումնական հաստատությունը

Ուսումնական հաստատությունները կարող են անվանակոչվել պետական, հասարակական, գիտական նշանավոր գործիչների, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչների, այլ նշանավոր անհատների կամ որոշակի շրջանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների անուններով, տարեթվերով կամ ամսաթվերով: Հաստատությունը կարող է կոչվել նաեւ ֆիզիկական անձանց եւ ոչ առետրային կազմակերպությունների անուններով, եթե դրանք նշանակալից են որոշումն պետական ուսումնական հաստատության հիմնադրման, վերակառուցման, վերագինման եւ նորոգման գործում:

Դպրոցը նշանավոր որեւէ անհատի անվամբ կարող է անվանակոչվել նրա մահվանից առնվազն 5 տարի հետո:



### Նոր անվանափոխում՝ առնվազն 20 տարի հետո

Հաստատության անվանումը կարող է փոփոխվել անվանակոչումից առնվազն 20 տարի հետո՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում: Բացառիկ դեպքերում անվանման փոփոխությունը կարող է քննարկվել ավելի վաղ ժամկետում:

Ուսումնական հաստատությունները կարող են անվանակոչվել թվային եւ անվանական կարգով:

Ուսումնական հաստատությունների թվային անվանակոչման դեպքում ուսումնական հաստատության թվային անվանմանը պետք է նախորդի համայնքի կամ բնակավայրի անունը (օրինակ՝ Երեւանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց կամ Երեւանի թիվ 186 հիմնական դպրոց):

Ուսումնական հաստատությունների բաղադրյալ անունների ինչպես գոյական, այնպես էլ ածական լրացումները, իբրեւ հատուկ անուններ, այլ լեզուներով գործածվելիս չեն կարող թարգմանվել:

### Անվանում տալու դեպքերը

Հաստատության անվանումներ (անվանական կամ թվային) տրվում են.

- նոր կառուցվող կամ հիմնադրվող, անհուն եւ միայն թվային անվանում կրող ուսումնական հաստատությունների,
- ուսումնական հաստատությունների անվանումները կանոնավորելու, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ առկա է ուսումնական հաստատության անվանումը փոխելու որոշում:

Նշենք, որ իրավական նոր կարգավորման նպատակն է անվանակոչությանը եւ անվանափոխությանը առնվող գործընթացները կազմակերպել արդյունավետ ու անաչառ՝ հիմքում դնելով կրթական ընդհանուր քաղաքականությունը, սահմանելով համապատասխան չափորոշիչներ եւ ընդհանուր սկզբունքներ:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

## Նախագիծ

# Փոփոխություններ ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման կարգում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ուսուցիչների որակավորման տարակարգի շնորհման հրամանում փոփոխություն կատարելու նախագիծը:

Առաջարկվում է լրացնել եւ խմբագրել որակավորման տարակարգի շնորհման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը եւ տարակարգի բնութագրիչները: Այդ նպատակով փոփոխություն կկատարվի ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրամանի հավելվածում, որով կարգավորվում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգերի շնորհման գործընթացը:

Մասնագիտական հանրային կողմից հաճախ է հարց բարձրացվում, որ հանրակրթական դպրոցներում դասավանդվող առարկաների ուսուցիչների համար գործող կարգը հավասար հնարավորություններ չի ապահովում, ինչի հետեւանքով ուսուցիչների մի խումբ չի կարողանում օգտվել որակավորման տարակարգ ստանալու իր իրավունքից: Այսպես, 2020 թվականի նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում որակավորման տարակարգ

ստանալու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարին դիմում ներկայացրած 74 ուսուցիչից 19-ի փաթեթները մերժվել են՝ ներկայացված փաստաթղթերի եւ գործող կարգի՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրամանով սահմանված պահանջների միջեւ առկա անհամապատասխանությունների եւ որոշ բնութագրիչների անհստակությունների պատճառով:

Առաջարկվող փոփոխության մասնատեսվում է տարակարգի փաստաթղթերի ներկայացման ընթացքում հաճախակի հանդիպող խնդրահարույց հարցերը կարգավորել եւ գործընթացը հստակեցնել:

Մասնավորապես՝ հաշվի առնելով, որ «Ֆիզիկոլոգիա» առարկան ընդգրկված չէ ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների ցանկում, քննարկման դրված նախագծով առաջարկվում է որպես բնութագրիչ ներառել նաեւ հանրապետական մրցումներում մրցանակային տեղեր զբաղեցրած սովորողներ ունեցող ուսուցիչների համապատասխան փաստաթղթերը:

Առաջարկվում է տարակարգի տրամադրման պայմանների ցանկում ներառել նաեւ օլիմպիադաներում կամ առարկայական տարբեր մրցույթներում մրցա-

նակակիր սովորողներ ունենալու համաձայնեցրել (գործող կարգում պարտադիր էր մեդալակիր լինելը, այնինչ շատ դեպքերում հաղթանակի համար մեդալի փոխարեն այլ մրցանակ է տրվում):

Համավարակի պայմաններում ներդրված հեռավար կրթությանը պայմանավորված՝ հանրակրթական դպրոցների մի շարք ուսուցիչներ վերապատրաստման դասընթացներ են վարել նաեւ հեռավար եղանակով: Նկատի առնելով այդ իրողությունը՝ առաջարկվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցող հարթակներում վերապատրաստման դասընթաց վարելու, ինչպես նաեւ եվրոպական դպրոցների համագործակցության «Իթվինինգ» ծրագրով վերապատրաստում իրականացնելու փաստերը ներառել տարակարգի բնութագրիչների ցանկում՝ վերապատրաստող ուսուցչի գործունեությունն ամփոփելով մեկ ընդհանրական բնութագրիչի մեջ:

Առաջարկվում է հստակեցնել նաեւ հրապարակումներ ունենալու բնութագրիչը՝ խուսափելով երկիմաստ մեկնաբանություն եւնթադրող ձեւակերպումներից:

Մեկ այլ փոփոխությանը ուսուցչի վարպետության մակարդակի բնութագրիչը կդիտարկվի միայն լավ եւ գերազանց մակարդակների դեպքում, քանի

որ, գործող կարգով, ըստ էության, պահանջվում է միայն վարպետության մակարդակի փաստաթղթերի ներկայացում՝ անկախ նրանից, որ գնահատականը կարող է լինել վատ կամ ոչ բավարար:

Նախագծի կարելու նորություններից է գիտական աստիճան կամ կոչում ունենալու վերաբերյալ բնութագրիչի ներառումը, ինչը լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ մասնագիտական գիտելիքների զարգացման համար:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանի** տեղեկացմամբ՝ գործող կարգում ընթացիկ փոփոխությունների կատարումն արդեն հասունացած էր՝ հաշվի առնելով որակավորման տարակարգ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամանակ ի հայտ եկող անհամաձայնությունները: Սակայն հետագայում «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունից հետո, նախատեսվում են տարակարգի շնորհման գործընթացի առավել արմատական փոփոխություններ՝ մանկավարժական ներուժի զարգացման նպատակով:

Նշենք նաեւ, որ շահագրգիռ մասնագետներն ու կառույցները իրենց առաջարկները կարող են ներկայացնել մինչեւ փետրվարի 10-ը:





Խաչատուր ԱՐՈՎՅԱՆ

«Վերք Հայաստանի»

Գլուխ առաջին (հատված վեպից)

Բարեկենդան էր: Չինն էլեւ, դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզըկա գիշերը է՛նպես էր գետինը սառցրել, որ ամեն մեկը ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի ջանը սրտնացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել: Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարքիս բարով մնա սախ: Դուշ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, էստեղ-էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում: Գետերի, առվերների երեսները սառիցը մեկ գագ էլել, հաստացել, իրար վրա դիզվել, էնպես էր քրի, աղբրի բերնին հուպ տվել, որ մոտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քլքլում էր ու էլ ետ էստեղ-էնտեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում:

Արեգակը էս առավոտ որ գլուխը քնի տեղիցը ու աղոթարանիցը չի՛ բարձրացրեց ու աչքը աշխարքի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին է՛նպես էր պեծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմիրն տալիս, որ հենց իմանաս, թե արմազ, զմռուք, յախութ ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլեին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դռնին փռած: Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին է՛նպես էր մեյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամփորդի քիթ ու պռունկը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ճամփից խռկում, սար ու չուլ քցում, խեղդում կամ քարեքար տալիս:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ձմեռվա իրիկունը

Թարգմանություն Ա.Ս.Պուշկինից

Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գազան. Մին՝ վայրենի սուլում պես-պես, Աղմղկում է տանիքում, Մին՝ ուշացած ճամփորդ, ասես, Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, աղբատ ու հին, Ե՛վ մըթին է, ե՛ւ տըխուր. - Ի՞նչ էս նըստել պատի տակին, Իմ պառավըս, էդպես լուռ: Հոգնե՛լ էս դու փոթորիկի Ոռնոցներից խելագար, Թե՞ նիրհում էս քո իլիկի Բըզզոցի տակ միալար:

Արի խմե՛նք, բարի ընկեր, Իմ սեւ, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Սիրտներըս բաց կը լինի: Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ Հավքը ծովի են ափին, Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գազան: - Արի խմե՛նք, բարի՛ ընկեր Իմ սեւ, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Սիրտներըս բաց կը լինի:

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Ինչքան որ հուր կա իմ սրտում բոլորը քեզ. Ինչքան կրակ ու վառ խնդում բոլորը քեզ. Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝ Դու չմրսես ձմռան ցրտում բոլորը քեզ...



Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Առաջին ձյունը

-Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս, Բակն ու դուռը լի Ինչքա՛ն ըսպիտակ Թիթեռ է գալի... Եսքան շատ թիթեռ Չեմ տեսել էս դեռ: - Չէ՛, իմ անուշի՛կ, Թիթեռներ չեն էդ. Թիթեռներն անցան Ծաղիկների հետ: Էդ ձյունն է գալի, Փաթիլն է ձյունի, Որ կարծես սպիտակ Թիթեռնիկ լինի:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

\*\*\*

Վայում է քամին՝ ցուրտ, ձմեռնամուտ, Չոր տերեւները շուրջս է դիզում. - Ո՛վ է իմ սիրտը տրորում անգութ, Սեւ մազերիս մեջ ձերմակ է հյուսում:

Չյունը պատանքով ճամփես է ծածկում, Սիրտս գերեզման՝ մռայլ եւ անհույս, ... Հատ-հատ իմ թաղման զանգերն են զարկում, Ու մի սիրտ վրաս լալիս է քնքուշ...

Համո ՍԱՀՅԱՆ

Ձմեռնամուտ

Արագած սարն է ամպի մեջ լռել, Եվ թեւերն ամպոտ հողմերը նրա Մի բեկոր ձմեռ դաշտերից բերել Շաղ է տվել թաց մայթերի վրա:

Ցուրտ քամիներն են սուրում սարերից, Բայց իր գարնան մեջ սիրտս այնքան է տաք, Որ չի տարբերում ձյունն է ոտքիս տակ, Թե՞ ծաղիկներ են թափվել ծառերից:

Շուշանիկ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Փաթիլն ուզեց

Փաթիլն ուզեց ինձի գգվել, գուրգուրել. Իմ թշերը պաղ շուրթերով համբուրել. - Ես գարուն եմ, դու ցուրտ ձմեռ, ա՛յ փաթիլ. Քո համբուրից դու կը դառնաս խեղճ կաթիլ:

Սառ հողի տակ մի օր կը հանգչեմ էս արձակ. Իջիր վրաս երբ կամենաս համարձակ. Իմ սեւ թմբից էլ չես հալչի, այ փաթիլ, Անջերմ, անկյանք էս կը դառնամ խեղճ կաթիլ:

Տիեզերքի տապ ու կիզող համբուրից Որպես ծաղիկ թոշմած ու զուրկ եմ բույրից. Ողջըս դանդաղ պիտի հյուծվի ու հալչի Ոչ մի շրթի համբույրն էլ ինձ չի դիպչի...





**Վահան ՏԵՐՅԱՆ**

**Ձմռան գիշեր**

Տխրությունս անուշ է, որպես  
Յեռավոր, հեռավոր կարկաչուն.  
Այնպես մեղմ է իմ սերն ու այնպես  
Անուշ է նա իմ սիրտը տանջում:

Չեմ ուզում ոչ անցյալը հիշել,  
Ոչ գալիք օրերին նետել հույս,  
Հանգիստ է իմ շուրջը եւ գիշեր,  
Ու սիրտըս չի տենչում արշալույս:

Անդորրել է աշխարհը բոլոր,  
Դուրսը ձյուն է գալիս, փողոցում  
Գիշերը եւ հանգիստ է, եւ խոր,  
Ու սիրտըս առավոտ չի ուզում:

Մաքուր է իմ հոգին, ու հիմա  
Օրհնում եմ վիճակըս երկրային,  
Ընդունում եմ սիրով կյանք ու մահ  
Ու սիրտըս պարզում եմ աշխարհին...

Անշար է իմ հոգին ու հանգիստ,  
Գիշերը անդորր է, դուրսը ձյուն.  
Ննջեցե՛ք հավիտյան, վերք ու վիշտ,  
Ծավալվի՛ր, լուսեղեն մենություն...

**Գուրգեն ԲՈՐՅԱՆ**

**Ձմռան երգ**

Տեսե՛ք, տեսե՛ք,  
Ձյուն է գալիս  
Փաթիլ-փաթիլ,  
Սպիտակ,  
Անտառ ու դաշտ,  
Փողոց ու տուն  
Առել իրեն  
Գորգի տակ:

Ջան, ջա՛ն ձմեռ,  
Հագար բարով,  
Ինչ ուրախ եմք  
Մենք այսօր,  
Ձնագնդի  
Ու ձնե մարդ  
Մենք կշինենք  
Ամեն օր:

Քո նվերը,  
Սպիտակ է,  
Ճերմակ, փափուկ,  
Գեղեցիկ,  
Տե՛ս, ինչքան լավ  
Պար են բռնել  
Օդում՝ ինչպես  
Թիթեռնիկ:

Տեսե՛ք, տեսե՛ք,  
Ձյուն է գալիս  
Փաթիլ-փաթիլ,  
Սպիտակ,  
Անտառ ու դաշտ,  
Փողոց ու տուն  
Առել իրեն  
Գորգի տակ:

**Վահան ԹԵՔԵՅԱՆ**


**Ձյունը**

Օ՛հ, հանդիպո՛ւմըս քեզի, ձյունին ներքեւ, այն գիշեր,  
Թեթեւ ու լուռ՝ երկինքն իջնող ձյունին, հարսի պես...  
Տարի մ'ամբողջ ես փախեր էի քեզմե, քեզ սիրեր,  
Ու միայն ձյունը հիմա զիս կը մղեր դեպի քեզ...

Որքա՛ն գորով, զմայլանք, արգահատանք ու տենչանք  
Քեզի համար տակավի՛ն հոգիս մեջ ունեի.  
Որքա՛ն հրձվանք խաբուսիկ եւ իրական տառապանք՝  
Արթնության մեջ ու ըրնի քեզմե եկած էր ինձի...

Եվ հիմա դո՛ւն էիր, դո՛ւն որ ձյունին տակ, ինձի հետ  
Կը խոսեիր շունչ շունչի, ու կուտայիր ինձ վաղվան  
Հույսը գարուն երկնքին, պարտեզներուն ծաղկավետ...

-Եվ դողալով գացի տուն... Բայց իրոք դո՛ւն էիր ան.  
Ձայնդ ու խոստումը՝ դ՛ի նչպե՛ս զքեզ տարբեր կ'ընեին.  
Ստուգության մեջ ինչպե՛ս կ'որոնեի հույսս հին...



**Մատթեոս ԶԱՐԻՖՅԱՆ**

**Կը ձյունն**

Հոգիս կեսգիշեր՝ մ'է ձմեռային,  
Ուրկե տակավին երկինք կընային  
Հիվանդ ու անտեր  
Քանի մը լապտեր...

Բայց ալ կը ձյունն՝ ծամբուն վրա Հույսին  
Ուր հոգի տվող սերեր կը մըսին:  
Սեւ ճամբորդ մ'հեռվեն  
Կուգա համրորեն...

**Գուրգեն ՄԱՅԱՐԻ**

**Ձմեռ**

Թափվի՛ր, ճերմակ, թափվի՛ր, ձյուն,  
Թափվիր իմ սրտում,  
Ծածկիր անտառ ու կածան,  
Ջրաղացը հին, հյուղ ու ծառ,  
Գյուղակն իմ սրտում:

Թափվիր դանդաղ ու թեթեւ,  
Այսպես թափվում էիր դու,  
Երբ ես ջահել էի դեռ  
Հույզերով հորդուն:-  
Այսպես թափվում ես հիմի,  
Հանդիսավոր ու հանգիստ,  
Ասես պարիսպներին հին  
Հայկական վանքի:

Թափվիր, փռվիր իմ սրտում,  
Ճերմա՛կ երագ, ճերմա՛կ ձյուն...

**Պարույր ՍԵՎԱԿ**

**Վառարանի առաջ**

Իսկ քարածո՛ւ լիսը...

Երբ նա վառվում է  
Ձմեռվա ցրտին,  
Հին վառարանում,  
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն,-

Լինում է այնպես,  
Որ՝ մեկ էլ տեսար՝  
Սոսափն եմ լսում ա՛յն անտառների,  
Որոնք բյուրիազար տարիներ հետո  
Այս քարածուխին պիտի վերածվեն.  
Եվ գազանների ոռնոցն եմ լսում  
Այդ անտառների անեզրության մեջ.

Եվ ձայնը նաեւ  
Իմ նախա-նախա-նախապայերի,  
Որ որս են անում այդ անտառներում,  
Որ մերկանդամ են  
Եվ ունեն դեռ պոչ,

Բայց անկարող եմ այլևրս ապրել  
Լռին խավարում կույր անծավների,  
Ինչքան էլ դրանք թվան ապահով:

Ու հասկանում եմ,  
Որ սերվել եմ ես  
Դե՛ռ այն ժամանակ, հե՛նց այն ժամանակ...





# «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը հրավիրում է մրցույթի

## Հիմնադրամի իրավաբանական սպասարկման բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Իրավաբանական սպասարկման բաժնի պետի հիմնական գործառույթները՝  
1. ապահովում է կրթության եւ գիտության բնագավառների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները,

2. ապահովում է կրթության եւ գիտության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակման եւ դրանց իրականացման կազմակերպման աշխատանքները,

3. կազմակերպում եւ ապահովում է հիմնադրամ ներկայացված դիմումների, առաջարկությունների եւ այլ գործընկերների վերաբերյալ իրավական եզրակացությունների տրամադրումը,

4. ապահովում է կրթության եւ գիտության ոլորտի իրավական կարգավորում պահանջող հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը,

5. ապահովում է տարբեր դատական ատյաններում հիմնադրամի ներկայացուցչությունը, իրականացնում է հիմնադրամի շահերի պաշտպանությունը,

6. ապահովում է վարչական վարույթների իրականացման աշխատանքները,

7. ապահովում է հիմնադրամի անունից, համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման աշխատանքները,

8. ապահովում է հարկադիր կատարման ծառայության հետ կապված աշխատանքների կազմակերպումը,

9. ապահովում է կրթության եւ գիտության բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակումը ու քննարկումը,

10. Տնօրենին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական, մշակութային եւ սպորտային հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաեւ աշխատանքային խմբեր կազմավորելու համար,

11. ապահովում է հիմնադրամի առջեւ դրված նպատակներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների եւ այլ փաստաթղթերի նախապատրաստման գործընթացը, ինչպես նաեւ մշակում է դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ եւ ուղեցույցներ,

12. ապահովում է քաղաքացիների դիմումներին պատասխանելու գործընթացը,

13. ապահովում է բաժնի աշխատանքային ծրագրերի ներկայացումը,

14. ապահովում է անհրաժեշտության դեպքում հրավիրում է խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

### Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- 1. «Իրավունք» մասնագիտության գծով բարձրագույն կրթություն:
- 2. Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3. Իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

4. Համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է՝ անորոշ ժամկետով:
- Դիմումների ընդունման ժամկետն է՝ 10.02.2021 – 18.02.2021թթ.:
- Աշխատավարձի չափը՝ 250000 ՀՀ դրամ:

### Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն Թափուր տեղի անվանումը, որին հավակնում է,
- 2) անձնագրի պատճենը,
- 3) ինքնակենսագրություն,
- 4) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- 5) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
- 7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ,
- 8) տեղեկանք՝ ԿԱԻ-ում աշխատելու մասին (առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացվում են միայն էլեկտրոնային փոստի միջոցով (էլ. փոստ՝ kznak.himnadram@gmail.com): Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.02.2021թ.:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային եւ հարցազրույց փետրվարի 23-ին՝ ժամը 10<sup>00</sup>-ին, Երեւան, Տիգրան Մեծի 67 հասցեում (ԿԱԻ նախկին շենք):

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 091 20-21-19

## Հիմնադրամի ուսումնական հաստատության զարգացման կառավարման բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Ուսումնական հաստատության զարգացման կառավարման բաժնի պետի հիմնական գործառույթները՝

Մշակում է

1. ուսումնական հաստատության կառավարման գործող մոդելներ, նորարարական մոտեցումներ,

2. ուսումնական հաստատության կառուցվածքի, ընթացիկ աշխատանքների նկարագրությունը, իրականացնում է գործող մոդելների ուսումնասիրություն եւ նոր մոդելների մշակումը,

3. ուսումնական հաստատությունում ուսումնական գործընթացի պլանավորման եւ իրականացման մեթոդներ,

4. ներդրողական վերահսկողության ռազմավարություններ եւ մեթոդներ,

5. ուսումնական հաստատության կանոնադրության փոփոխությունների առաջարկություններ,

6. ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կառուցվածքի եւ կազմման մեթոդներ,

7. ուսումնական հաստատության գործունեության տնտեսական դաշտի լրամշակման առաջարկություններ,

8. ուսումնական հաստատության ծախսերի ֆինանսական պլանավորման, բյուջեի կառավորման մեթոդների, ռազմավարությունների առաջարկություններ,

9. ուսումնական հաստատության ծախսերի նախահաշվի եւ դրա կառավորման մոդելներ, ռազմավարություններ,

10. Կազմակերպում է այլ մարմինների, պաշտոնատար անձանց կողմից պահանջվող՝ բաժնի առջեւ դրված գործառույթների եւ խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության եւ նյութերի տրամադրումը,

11. Ուսումնասիրում է բաժնի գործառույթները կանոնակարգող եւ դրանց իրականացմանն առնչվող իրավական ակտերը, ստուգել եւ վերլուծել այդ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պայմանները, առաջարկություններն ու եզրակացությունները:

### Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- 1. Բարձրագույն կրթություն:
- 2. Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա կրթության կառավարման աշխատանքային ստաժ կամ մանկավարժական աշխատանքի՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3. Իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

- 4. Օրենքների եւ կարգերի նախագծերի մշակման կարողություն:
- 5. Մեթոդների եւ ռազմավարությունների մշակման կարողություն:
- 6. Ուղեցույցներ թղթային եւ թվային տարբերակներով մշակման կարողություն:
- 7. Հեռավար դասընթացներ ստեղծելու եւ վարելու կարողություն:
- 8. Տիրապետում է word, excel եւ powerpoint ծրագրերին:
- 9. Համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման եւ բլոգ վարելու կարողություն:

10. Բաժնի մյուս մասնագետների հետ առցանց փաստաթղթեր մշակելու եւ խմբագրելու, առցանց շտեմարաններից օգտվելու, էլեկտրոնային նամակներ ստանալու եւ ուղարկելու, առցանց քննարկումների մասնակցելու կարողություն:

- 11. Առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:
- Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է՝ անորոշ ժամկետով:
- Դիմումների ընդունման ժամկետն է՝ 10.02.2021 – 18.02.2021թթ.:
- Աշխատավարձի չափը՝ 250000 ՀՀ դրամ:

### Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն Թափուր տեղի անվանումը, որին հավակնում է,
- 2) անձնագրի պատճենը,
- 3) ինքնակենսագրություն,
- 4) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- 5) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
- 7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ,
- 8) տեղեկանք՝ ԿԱԻ-ում աշխատելու մասին (առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացվում են միայն էլեկտրոնային փոստի միջոցով (էլ. փոստ՝ kznak.himnadram@gmail.com): Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.02.2021թ.:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային եւ հարցազրույց փետրվարի 23-ին՝ ժամը 15<sup>00</sup>-ին, Երեւան, Տիգրան Մեծի 67 հասցեում (ԿԱԻ նախկին շենք):

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 091 20-21-19

# «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը հրավիրում է մրցույթի

## Հիմնադրամի ուսումնական հաստատության զարգացման կառավարման բաժնի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

## Հիմնադրամի ուսումնական բնագավառների մշակման եւ զարգացման բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

